

Թուրքական պատմագիտական ընկերությունը

Թուրքական պատմագիտական ընկերության (բաղկացած էր 16 անդամից) առաջին ժողովը տեղի է ունեցել 1930 թվականի հունիսի 4-ին Թուրքական օջախների կենտրոնական մասնաշենքում, որտեղ նախագահ Յանդուլլահ Սուպհի գլխավորությամբ ընտրվում է ղեկավար մարմին հետևյալ կազմով. նախագահ՝ Յանրապետության նախագահի գլխավոր քարտուղար Մեհմեդ Թևֆիք (Բըյըքօղլու), փոխնախագահ՝ Իրավաբանական ֆակուլտետի քաղաքական պատմության ամբիոնի պրոֆեսոր և Ստամբուլից ընտրված պատգամավոր Յուսուֆ Աքչուրա, փոխնախագահ՝ Չանաքքալեի պատգամավոր Սամիհ Ռիֆաթ, գլխավոր քարտուղար՝ Այդընի պատգամավոր դոկտոր Ռեշիթ Գալիփ³¹:

1930 թվականի վերջերին, հանձնախումբը հրատարակում է «Թուրքիայի պատմության հիմնական ուղիները» վերտառությամբ 606 էջանոց մի աշխատություն³², որի առաջին էջում հին պատմագիտության վերաբերյալ նշվում է հետևյալը. «Մինչ այժմ մեր երկ-

³¹ İğdemir U., „Cumhuriyetin 50 yılında Türk Tarih Kurumu, - Türk Tarih Kurumu Basımevi - Ankara 1973, s. 4, ss.158

³² İğdemir U., „Cumhuriyetin 50 yılında Türk Tarih Kurumu, - Türk Tarih Kurumu Basımevi - Ankara 1973, s. 5, ss.158,

րում հրատարակված պատմության գրքերից շատերում, որպես սկզբնաղբյուր օգտագործված ֆրանսերենով պատմության գրքերում գիտակցաբար կամ անգիտակցաբար նվազեցվել է թուրքերի դերը համաշխարհային պատմության մեջ»³³:

Թուրքերին խիստ անհանգստացնում էր այն հանգամանքը, որ օտարերկրյա գիտնականները կարող են հանրությանը ներկայացնել բոլոր այն իրողությունները, որոնք կազմում են Թուրքիայի պատմությունը: Պարզ է, որ թուրքական պատմագիտական ընկերություններն անելու էին ամեն ինչ նվազեցնելու օտարերկրացիների կողմից Թուրքիայի պատմության վերաբերյալ բոլոր այն հրապարակումների քանակը, որոնք չէին բխելու Թուրքիայի Հանրապետության շահերից: Այս դեպքում նույնպես մեծ էր Թուրքական պատմագիտական ընկերության դերը, քանի որ ընկերության համագումարներին հրավիրվում էին մասնակցելու գիտնականներ աշխարհի տարբեր երկրներից:

Ստեղծման օրից մինչև 1940թվականը ընկերությունն իր աշխատանքները կազմակերպել է նախկին Թուրքական օջախներին պատկանող շենքում: 1940թ.-ից ընկերությունն իր աշխատանքները շարունակել է Անկարայի համալսարանի Լեզվի և պատմա -

³³ *Berkay, H., Cumhuriyet İdeolojisi ve Fuat Köprülü, Kaynak Yayınları, İstanbul, 1983, s. 51, ss. 111,*

աշխարհագրական ֆակուլտետի շենքում³⁴:

1931 թ-ին փակվում է թուրքական օջախներ կազմակերպությունը և այն որպես թուրքիայի պատմության ուսումնասիրման հանձնախումբ այլևս չի գործում, քանի որ լեզվական բարեփոխումներից հետո կազմակերպությունը 1935թ.-ին Աթաթուրքի կողմից վերանվանվում է «Թուրքական պատմագիտական ընկերություն»:

³⁴ *Türk Tarih Kurumu Yayın Kataloğu, Atatürk Kültür, Dil ve Tarih Yüksek Kurumu, Türk Tarih Kurumu Basımevi, Ankara, 1989, s.1, ss.40.*